



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36  
հեռ. (0264) 6-15-11  
էլ. հասցե: info\_gavar@aarhus.am

N AA - 005

« 22 » Մայիսի 2015թ

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Գրիգորյան

Մասնակցելով Գեղարքունիքի մարզի Սևանա լճի Կարճաղբյուր համայնքին հարող հատվածում <<Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման>> հիմնադրամի կողմից նախատեսվող մոդելային ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հանրային լսումներին և տեղեկացնելով հանրությանը նախագծի մասին /այսուհետ նախագիծ/, մենք հավաքագրել ենք քաղաքացիների, քաղաքացիական ակտիվ խմբերի և փորձագետների առաջարկները և կարծիքները: Օգտվելով որոշումների կայացմանը հանրության մասնակցության իրավունքից, ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մի քանի առաջարկներ և կարծիքներ ու խնդրում ենք նախագիծը հաստատելուց առաջ հաշվի առնել դրանք:

Այսպիսով, նախագծի վերաբերյալ առաջարկում ենք.

- Լճի ներկայիս վիճակը գնահատելու նպատակով՝ մինչև գործունեություն սկսելը իրականացնել համալիր՝ հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական, հիդրոմորֆոլոգիական մոնիտորինգ՝ լավագույն հասանելի մեթոդներով և տեխնոլոգիաներով և հասանելի դարձնել արդյունքները հանրության համար:
- Ունենալով արդեն լճի իրական վիճակի մասին տեղեկատվություն, Մաթեմաթիկական ժամանակակից մեթոդներով մշակել և հանրությանը ներկայացնել գործունեության արդյունքում լճի էկոհամակարգի վրա ազդեցությունների և փոփոխությունների հնարավոր բոլոր սցենարները: Մենք գտնում ենք, որ պետք է ընտրվեն լավագույն սցենարները, որոնք նախապես կներկայացվեն ստեղծված մոնիտորինգային խմբին և հանրությանը, որից հետո նոր սկսել գործունեությունը փուլ առ փուլ, ինչը թույլ կտա նվազեցնել լճի էկոհամակարգի վրա ազդեցությունները:
- Մասնագետների պնդմամբ լճի ավելի խորը հատվածում նախագծի իրականացման դեպքում մեծանում է ազդեցության գոտին և ամբողջ լճի ջրի որակի փոփոխման ռիսկը: Ուստի պետք է անպայման նախատեսել հատակի մշտական ուսումնասիրություն ժամանակակից մեթոդներով և տեխնոլոգիաներով, և անհրաժեշտության դեպքում հնարավորություն ստեղծել լճի այդ հատվածը մաքրելու, կամ պարտավորվել ամենաչնչին շեղում նկատելու դեպքում դադարեցնել գործունեությունը:
- Քանի որ գործունեությունը ծավալվելու է Սևանա լճի ավելի խորը հատվածներում, քան նախորդ պիլոտային ծրագրի դեպքում՝ որպես նախագծի ազդակիր համայնքներ ճանաչել Սևանա լճի

սփյառերձ բոլոր համայնքները և այդ համայնքներում նույնպես իրականացնել իրագեղման միջոցառումներ:

Վերանշաղ առաջարկներն ու կարծիքները հաշվի չառնելու դեպքում, խնդրում ենք կետատկետ նշել պատճառները:

Կանխավ շնորհակալություն:

Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող |



Լ. Ասոյան